

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for supporting the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
38

Yerevan – 2024

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
38

Ереван – 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

38

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր),
Վահան Տեր-Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե
Թորոսյան, Թեո վան Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան,
Գուրգեն Գասպարյան, Նազենի Ղարիբյան, Արուսյակ Թամրազյան, Հայկ
Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 38, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտ. Երևան, 2024, 352 էջ:

ՄԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻ ԲԱՐՈՉ

Բանալի բառեր՝ *Կաթողիկոս, քարոզգիրք, քարոզ, Ս. Էջմիածին, Սահակ Ահապին, Հակոբ Շամախեցի, Մաղաքիա Օրմանյան, վանք, Աբրահամ, Մատենադարան, Երուսաղեմ:*

Մաղաքիա պատրիարք Օրմանյանը խոսելով Տ. Սիմեոն Ա Երևանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսի մասին, ցավով նշում է. «Բայց չհասաւ տպագրել երկհատոր Քարոզգիրքը, և Պրոփիլերի ու Արիստոտելի, Անյաղթի ու Պրոկղի եռհատոր լուծմունքը: Իր գործերէն միայն Ձամբուր հրատարակուեցաւ 1873-ին»¹: Ձեռագրական տվյալները նոր փաստեր են արձանագրում այս հարցի վերաբերյալ, ինչպես օրինակ, եփրեմ վարդապետը (հետագայում՝ Տ. Եփրեմ Ա Չորագեղցի) Սիմեոն Երևանցի կաթողիկոսի մահից հետո (1779) իր գաղափարած «Մաշտոց ձեռնագրութեան» մատյանի (ՄՄ 2891) հիշատակարանում ամրագրում է. «Ձի շարադրեաց խորին և աստուածատուր իմաստութեամբ իւրով (Սիմեոն Երևանցի) եւ նուրբ աստուածաբանութեամբ զգիրք մի ընդդէմ երկաբնակաց՝ «Պարտավճար» կոչելով զանունն: Ձի յորդորելով զազգս Հայոց հեռանալ եւ ի բաց կալ յաղանդոյն երկաբնակաց, իբր թէ վճարէ զպարտս հոգեւոր հովուապետութեան իւրոյ եւ է Բ.(2) հատոր. զոր եւ ետ տպագրել նորոգ թղթով իւր շինեալ թղթատունն, ի յիւրակերտ տպարանին: Եւ զառաջին հատորն տպեալ...»²:

Մեր ձեռքի տակ է Սիմեոն Երևանցու ինքնագիր երկհատոր անտիպ «Քարոզգիրք»-ը (ՄՄ 2212), որը ձեռագրացուցակում «Սիմէոնի Երեւանցի, Մատենագրութիւնք»³ խորագիրն է կրում: Առաջին հատորը ներբողներ են, ճառեր և

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտական աշխատող, shah1959@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 27 նոյեմբերի, 2024, հոդվածը գրախոսելու օրը՝ 15 դեկտեմբերի, 2024:

¹ Ազգապատում, Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, նախկին պատրիարք, Բ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3604:

² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, և. Թ, խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երևան, 2017, էջ 1146:

³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, և է, խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 453-466:

վերաբերվում են աշխարհի արարչություն վեց օրերին, Աստծո ողորմության տեսակներին, Սուրբ մեռուներին, Գրիգոր Լուսավորչին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և այլն, և ավարտվում է «Նախերգանք քարոզից» հեղինակային բանաբաղությունով, իսկ երկրորդ հատորը «Տարեկան քարոզգիրք» է, կամ, ինչպես հաճախ նշվում է «Կիրակեից Սիմեօն կաթողիկոսի երանելուն»⁴: Այն սկսվում է. «Յառաջաբանութիւն եւ առաջդեցութիւն ինչ Յաղագս առաջակայ քարոզ գրոցս ի հեղինակէն արարեցեալ» նախընթացով և իր փոքրիկ յիշատակարանով. «Ի Սիմեօնէ յանպիտան վարդապետէ Երեւանցոյ եւ ի պաշտօնեայէ Սրբոյ Էջմիածնի ի Մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս ի գործս նուիրակութեան, ի ՌՄէ (1758) թուոջն մերում:

Օգնեա՛ր Սուրբ Հոգի Աստուած:

Գիրք քարոզից ժողովեցեալ ի գրոց աստուածայնոց եւ ի լուսաւոր բանից սրբոց վարդապետաց, յումեմնէ Սիմեօնէ յանարգիսն վարդապետէ ի պաշտօնեայէ Սրբոյ Էջմիածնի ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ մանկանց եկեղեցոյ» (ՄՄ 2212, թ. 125բ):

Իսկ «Տարեկան քարոզգիրք»-ը սկսվում է Աւետման տոնից և ավարտվում Տարեմուտի քարոզով: Քարոզների ընդհանուր քանակը հասնում է 106-ի «ՃԶ.»: Հերթական ՂԴ. (94) քարոզի խորագրին կից, Սիմեոն Երեւանցին մեր ուշադրությունը սևեռում է մի հանգամանքի վրա. «Աստի ի վայր ի կարգի աւուրց արտաքոյ են: Երբ պատշաճիցի քեզ, յայնժամ ասասցես» (ՄՄ 2212, թ. 303բ): Այսինքն՝ այստեղից սկսվում է «Արտաքոյ» հատորի քարոզները: «Արտաքոյ» քարոզաշարում բարոյախրատական, կրոնական քարոզների կողքին տեղ են գտել նաև այնպիսի քարոզներ, որտեղ նկարագրվում են Սիմեոնին ժամանակակից՝ թե՛ Կոստանդնուպոլսում և թե՛ Էջմիածնում տեղի ունեցող իրադարձություններ, որոնք կարող են նոր լույս սփռել ժԸ. դարին վերաբերվող բազում անլուծելի հարցերի վրա: Օրինակ, ՂԶ. (96) գլխահամարը կրող քարոզը նվիրված է. «Ի հանդիսին, որ եղեւ ի Պոլիս վասն որդեծնութեան թագաւորին» (ՄՄ 2212, թ. 306ա): Եղմ. 3013 ձեռագրում առավել ընդարձակ է խորագիրը և զբաղեցնում է Ղ. (90) քարոզը. «Նորին Սիմեօնի ի հանդիսին, որ եղեւ ի Պօլիս վասն որդեծնութեան Սուլթան Մուստաֆայ թագաւորին, որ եղեւ ի 1208 (1759) թուոջն, եւ մարտի 5» (թ. 316ա):

Մեր խնդրո առարկան ՃԵ. (105) քարոզն է՝ խորագրված «Նորին Սիմեոնի քարոզ ի Պոլիս ասացեալ Վասն անկմանն Իսահակայ վարդապետին ի հայրապետութենէն եւ յաջորդեցմանն Յակոբայ վարդապետին Շամախեցոյ ի թուին Հայոց 1208 (1759) թուին Հայոց», որ վերաբերում է Սուրբ Էջմիածին վանքի

⁴ Ձեռ. եղմ. 3013, ք. 216ա:

աքողված մի պատմութեան, կապված Սահակ Ահազին՝ Խորձենացի կամ Կեղեցի և Տ. Հակոբ Ե. Շամախեցի կաթողիկոսների հետ:

Մաղաքիա Օրմանյանը, ծանոթ չլինելով այդ քարոզին, խոսելով Միմեոն երեւանցու մասին գրում է. «Նոյն իսկ Ահազինի կաթողիկոսութիւնը շեղեալ նկատելը եւ Շամախեցին կաթողիկոսացնելու համար ճիգերը՝ իրմէ (Միմեոն երեւանցի) պատմուած չեն»: Սակայն, ձեռքի տակ ունենալով տպագիր «Ջամբո»-ը, ավելացնում է. «Քանի մի բառով իբրեւ օտարի մի գործ նշանակած է զայն կաթողիկոսներու համառօտ պատմութեան կարգին»⁵: Նորահայտ այս քարոզը գալիս է ապացուցելու, որ «օտարի մի գործ» չէ Միմեոն երեւանցու համար սույն ժամանակաշրջանը, պարզապէս տարբեր ընթերցող խավերին են ուղղված «Քարոզգիրք»-ն ու «Ջամբո»-ը: Վերջինս հասցեագրված է ավելի լայն ընթերցող շրջանակի, և հեղինակը նրանում պահպանում է պատշաճը, չգիմելով մանրամասները:

Երբ մահացավ Տ. Ալեքսանդր Բ. Բուզանդացի գահակալ կաթողիկոսը (1753-1755 թթ.), Մայր Աթոռի միաբանութեան փափագն էր Հակոբ Նալյան պատրիարքին տեսնել կաթողիկոսական գահին: Էջմիածնի վանքից դեպի Կոստանդնուպոլիս առաքվեց պատգամավորական մի խումբ՝ Միմեոն երեւանցի եպիսկոպոսի գլխավորութեամբ: Պոլսեցիք երկու թեկնածու էին առաջարկում կաթողիկոսի ընտրութեան համար՝ Հակոբ Նալյան Կոստանդնուպոլսի պատրիարքին և Սահակ եպիսկոպոս Ահազինին: Նալյանի վերջնական հրաժարվելուց հետո պատրիարքը հրավիրեց «մեծամեծներին» ժողով, որի մասնակիցները «կաթողիկոսութեան արժանաւոր նկատեցին Սահակ Ահազինը»⁶: Չնայած Միմեոն եպիսկոպոսի և Ջմյունիո առաջնորդ Աբրահամ Աստապատեցու ոչ դրական կարծիքին, 1756 թ. փետրվարին Սահակ Ահազինը ընտրվեց կաթողիկոս

⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 3496: Միմեոն երեւանցին «Ջամբո»-ում հիշաւի մի քանի տողով է ներկայացնում պատմական այս անցուղարձը. «Ի ՌՄԵ, (1756) թուոյն մեռում, եւ ի թագաւորութեանն Օսմանցոց Սուլթան Մուստաֆային, ի Կոստանդնուպոլիս կոչի ի հայրապետութիւն Սահակ վարդապետն Կեղեցի, որ Ահազին կոչիւր, և մնայ յամս երեւ և կէս առանց օծման և ոչ գայ ի սուրբ Աթոռս. վասն որոյ հանեն զնա ի ՌՄԸ. (1759) թուոյն ի հայրապետութենէն և մեռանի ի Կարին քաղաք»: Տե՛ս Ջամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէից, Համաժողովեցեալ եւ շարագրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կարողիկոսն երեւանցոյ: Ի փաստ Աստուծոյ եւ ի յօգուտ նոյնակերտի Աթոռոյս, ի յենարան եւ ի հեշտութիւն ի սմա նստողհայրապետաց, գործակալաց եւ համայն հարազատից պաշտօնէիցն սորին: Յամի ներմարմնութեան Տեառն, հազար եօթն հարիւր վաթսուն եւ հինգ՝ 1765, ՌՁԿԵ: Իսկ ըստ Հայոց թուականի, հազար երկուհարիւր տասն եւ չորս: Վաղարշապատ, 1873 թ., էջ 32: Տե՛ս նաեւ, Սիմէոն երեւանցի, Ջամբո, աշխատասիրութեամբ Հրանտ Օհանյանի, երեւան, 2022, էջ 75:

⁶ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 3452-3453:

Ամենայն Հայոց: Այս մասին ծանուցվեց նաև էջմիածնում, որտեղ տեղապահ էր Հակոբ եպիսկոպոս Շամախեցին: Պատմաբաններ Չամչյանը, Օրմանյանը և այլք զարմանքով են հետեւել Սահակ Ահազինի վարքին, որն առանց լուրջ պատճառի, վայելելով կաթողիկոսական աստիճանը, այդպես էլ չօծվեց և գրեթե չորս տարի ոտք չդրեց Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, օգտվելով կաթողիկոսական բուրոր արտոնություններից ու նյութական միջոցներից⁷:

Այսպիսով Սահակը այդպես էլ չեկավ էջմիածին, տարի ու կես մնաց Կոստանդնուպոլսում, իսկ գրեթե երկուսուկես տարի էլ անցկացրեց Կարինի Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում, որը գտնվում է Մուտուրկա գյուղի բարձունքին, և Հինձքի Կարմիր վանքում: Ուստի էջմիածնի Կոստանդնուպոլսի համաձայնությունները որոշվեց «Ահազինէ ձեռք քաշել, ըրած ընտրութիւննին չեղեալ համարել, եւ նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարել: Սահակի ընտրութիւնը կատարուած էր 1756 փետրուարին, իսկ նոր ընտրութիւնը տեղի ունեցաւ 1759 օգոստոսին, որով երեքուկէս տարի աթոռոյ պարապութիւնը տեւեց, պարզապէս Սահակի անօրինակ ընթացքին համար»⁸: Երկու եպիսկոպոսներ՝ Սիմեոն Երևանցին և Աբրահամ Աստապատցին ամենաառաջիներն էին, որ «կանուխէն սկսան խօսիլ ու պնդել, համոզել ու տարածել, թէ պէտք է Սահակէն ձեռք քաշել, նա կաթողիկոսութիւն ընելիք չունի, Մայր Աթոռը առանց կաթողիկոսի թողուլ հնար չէ, նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարել անհրաժեշտ է»⁹:

Այս անելանելի իրավիճակի ետնախորքի վրա փորձենք երկու խոսքով ներկայացնել Տեր Հակոբ Շամախեցի եպիսկոպոսի «ընթացքը»: Արեքսանդր կաթողիկոսի մահից՝ 1755 թ. նոյեմբերի 11-ից մինչև Տեր Հակոբ Շամախեցու կաթողիկոսական օծումը 1759 թ. նոյեմբերին, ուղիղ չորս տարի պատմաբանները համարել են կաթողիկոսական աթոռի «պարապութեան» շրջան: Սիմեոն Երևանցու բնութագրմամբ Հակոբ Շամախեցին ներկայանում է. «Այր պիտանի եւ խորհրդական, խելօք եւ հանճարեղ յամենայն գործս, գիտուն եւ շնորհաշատ: Մանկութենէն Մայր Աթոռի մէջ սնած եւ ապրած, եւ բազմակողմանի ուսմամբ զարգացած էր, այնպէս որ «ասէր դաս միաբանից զինչ եւ խնդրէին», ինչ տեսակ գրութիւն ալ որ պէտք ըլլար, ինքն կը խմբագրէր եւ «տայր գրագնացն» որ ընդօրինակեն, եւ այս ոչ միայն հայերէն, այլեւ պարսկերէն լեզուով, զի նա ինքն էր որ «գրէր եւ հոգայր զգրոց արքունականաց եւ դատաւորականաց»: Երևանցին

⁷ Միխայիլ Չամչյանց, Հայոց պատմություն (Սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ, Երևան, 1984, էջ 865, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 3453:

⁸ Նույն տեղում, էջ 3454-3455:

⁹ Նույն տեղում, էջ 3471:

ավելացնում է, թէ նաեւ «զարդեանս», այսինքն՝ իր ատենն ալ Շամախեցիին թողած պատճենները կը պահուէին եւ կը գործածուէին իբրեւ պաշտօնական գրութեանց պատրաստ ձեւեր, «յորոց գրագիրքն առնուն զօրինակս գրելեաց իւրեանց»: Ինչպէս կը տեսնուի, Շամախեցիին Մայրաթոռին ներքին գործերուն նուիրեալ անձ մը եղած է, եւ շատ շրջագայած չերեւիր»¹⁰: Օրմանյանի անաշառ դիտարկմամբ այդ չորս տարիների ընթացքում Մայր Աթոռի գործերի ընթացքը վարում էր տեղապահ Հակոբ Եպիսկոպոս Շամախեցիին:

Միմեոն Երեւանցու «Քարոզգրք»-ում եզակի դեր է հատկացված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ապագա Հայոց կաթողիկոս Միմեոն Երեւանցին չէր կարող հանդուրժել Սահակ Ահագինի այս աստիճան անպատասխանատուությունը, ծուլությունն ու արհամարհանքն իր պարտականությունների հանդեպ: Ընթերցելով քարոզը, տեսնում ենք, որ մեծ է եղել ճնշումը նաև Միմեոն Երեւանցու վրա, որովհետև նա այն հետևյալ տողերով. «Եթէ կարես ընդդիմանալ կամաց Տնօրինողին, յառաջ մատիր: Թէ ո՛չ, լուռ լեր եւ տու՛ր փառս Աստուծոյ» (ՄՄ 2212, թ. 317ա): Քարոզում, ընդամենը չորս անգամ է, որ հանդիպում ենք Սահակ Ահագինի եւ Հակոբ Շամախեցու անուններին: Առաջինը՝ խորագրի մեջ, որտեղ նշված է 1759 թվականը: Կարելի է եզրակացնել, որ քարոզը գրվել է Շամախեցու ընտրությունից հետո: Քարոզի բնաբանն է. «Յոչ յուստեքէ է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ»¹¹ (հմմտ. Իմաստ. Զ. 4): Երեւանցին ուզում էր հասկացնել հակառակորդներին, որ Հակոբ Շամախեցին ընտրվել է ոչ թէ մարդկանց միջամտությամբ, այլ Աստծո գործությամբ: Բազում սուրբգրական օրինակներ բերելով նա տալիս է քարոզի բանալին. «Եւ տեսանելով մեր զսոսա, միշտ ի մտի ունիցիմք զտուօղն իշխանութեան եւ խորշիցիմք ի յանկարգութենէ երկնչելով ի սոցանէ»¹²: Որից հետո հնազանդության պատգամ է հղում՝ ուղղորդելով մեզ չքննել ու չբամբասել. «Ուրեմն, հնազանդութիւն միայն պատշաճի մեզ եւ կամացն Աստուծոյ հետեւիլ եւ ոչ հարցանել պատճառն զո՞րպէ՞սն եւ զովն: Քանզի, դու ո՞վ ես, որ պատասխանի տաս Աստուծոյ»¹³: Երեւանցու հորդորն է, որ հիանալով Աստծո գործերի վրա, փառաբանենք նրան, «եւ ոչ այլ ինչ»:

Միմեոն Երեւանցին մի գարմանալի բառախաղ է ստեղծում ընթերցողի համար, հիմնվելով Աստվածաշունչ մատյանի վրա: Նրա թիրախը հայր Աբրահամի

¹⁰ Նույն տեղում, էջ 3475: Օրմանյանը մեջբերումներ է արել «Ջամբո»-ից, հմմտ. Ջամբո, Երեւան, 2022, էջ 75, որ որոշ տարբերություններ է պարունակում Օրմանյանի մեջբերած հին հրատարակությունից:

¹¹ Նույն տեղում, ք. 316ա:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

գերդաստանն է: Նա թեմային մոտենում է անտիկ ողբերգակ դրամատուրգի մտածողությամբ: Սուրբ գրքի փայլուն գիտակը չլուծվող հանգույցը սկսում է բացել Աբրահամին տված Աստծո խոստումից. «Բազմացուցանելով բազմացուցից զգաւակ քո եւ որպէս զաստեղս երկնից եւ որպէս զաւազ ծօլու առանց թռուոյ» (Մննդ. ԻԲ. 17): Քննելով պատմական ընթացքը, տեսնում է, որ Աբրահամի դեպքում, որպես անձի, չկատարվեց աստվածային խոստումը, բայց միայն մեկ որդի տվեց ծերութեան օրին, և այն է՝ Իսահակ «ամլածինն»: Հեղինակը գնալով խտացնում է ներկայակի գույները. «Նոյնպէս եւ յետ նորա ցԻսահակ ասաց զնոյնն եւ խոստացաւ, սակայն եւ ոչ նա ետես զբազմութիւն որդոց, այլ միայն զերկուս» (ՄՄ 2212, թ. 316բ): Սիմեոնը նկատի ունի Եսային ու Հակոբին: Քարոզգրքի հեղինակը, հետևելով սուրբգրային սյուժեի ընթացքին, ցույց է տալիս, որ ավագը զրկվեց անդրանիկ որդու օրհնությունից և պատվից. «Քանզի կամքն Աստուծոյ այն էր, զի Յակոբ՝ կրտսեր որդին Իսահակայ ժառանգեսցէ զօրհնութիւնն եւ լինիցի հայր բազմութեան»: Մարդկային բարոյական տեսակետից դիտարկելով, կոնֆլիկտի լուծումը տրամաբանական չէ, քանզի այստեղ գործում է ոչ թէ մարդու գործոնը, այլ Աստծո կամքը: Թեպետ Եսայը ավագ որդին էր և ցանկանում էր ստանալ ավագությունը օրհնությունը, ինչի մեծ փափագն ուներ նաև հայրը՝ Իսահակը, «սակայն ոչ կամեցաւ Աստուած: Զի ի մտի եղեալ էր զՅակոբ սիրել եւ զԵսաւ ատել»: Այստեղ երևում է բառախաղն ու հեղինակի ծածկված հումորը. Աստծո խոստումը չկատարվեց Իսահակի ժամանակ, այլ Հակոբի: Կարծես ենթատեքստում նա ներկայացնում է Իսահակ Ահագինն եւ Հակոբ Շամախեցուն:

Որպեսզի ասելիքը մերկապարանոց չլիվա, Երևանցին զուգահեռներ է անցկացնում նաև տարբեր դարաշրջաններում ապրած Դաւիթ և Սողոմոն, Եղիա և Եղիսե, Մովսես և Յեսու մարգարեների միջև՝ աստվածային կամքի նախախնամությունը ցույց տալու նպատակով: Բայց իր ասելիքը տեղ հասցնելու համար շարունակում է փոխաբերությունը հայր Աբրահամի ընտանիքի պատմության միջոցով, չմոռանալով նշել նաև մոր՝ Թեբեկայի միջամտությունը (զուգահեռ տանելով Սուրբ Էջմիածնի հետ՝ որպես Մոր), որպեսզի Հակոբը ստանա հայրական օրհնությունը Իսահակի ձեռքից: «Ըստ այսմ օրինակի եւ նոյն Աստուած, թէպէտ նախապէս զԻսահակ վարդապետն ընտրեաց եւ խոստացաւ նմա լինիլ հայր եւ հայրապետ ազգիս Հայոց եւ լինիլ մեծ եւ առաջին յեղբարս իւր, սակայն զխոստումն զայս առ նովաւ ոչ կատարեաց: Քանզի եւ Մայրն մեր՝ Սուրբ Էջմիածին ստիպեաց զկրտսերն՝ զՅակոբ որդին առնուլ զօրհնութիւնն անդրանկական յԱստուծոյ եւ նոյն Աստուածն, ըստ սրտի Մօրս մերոյ, զնա արար հայր բազմութեան

եւ հայրապետ ազգիս մերոյ եւ անդրանիկ յեղբայրս իւր, որպէս եւ եղենն» (ՄՄ 2212, թ. 317ա): Սահակ Ահագինը մնաց Կարինում եւ այնտեղ կնքեց իր մահկանացուն: Եվ, ինչպես Մովսէս մարգարեին, որին խոստացել էր մտնել Ավետյաց երկիրը, բայց բարձրացնելով մի բարձր լեռան վրա, թույլ տվեց, որ մի վերջին հայացք գցի և հենց այնտեղ էլ կնքի իր մահկանացուն, իսկ Աստվածային խոստման երկիրը մտնելու և այն վայելելու իրավունքը տվեց Հեսու Եսայիին, «նոյնպէս եւ նոյն Աստուածն, թէպէտ նախապէս ընտրեաց զԻսահակն ի հովուել զազգս Հայոց, մտանելով յերկիրն Էջմիածնի, սակայն յետոյ նոյն Աստուածն ասաց նմա, թէ. Տրտնջացեր դու: Վասն որոյ ի լեռնէդ Կարնոյ միայն նկատէս յերկիրն յայն եւ հանգիր յայդր: Դու ոչ հանգուցանես զժողովուրդ իմ, այլ Յակոբ, որ բարւօք խօսի զերկրէն եւ տքնի յայսքան ժամանակ վասն նորա: Որպէս եւ եղեն իսկ»: Նմանապէս էլ Դավիթը չպիտի պատրաստեր Աստծո տունը՝ տաճարը, որովհետեւ ձեռքերն արունոտ էին, այլ Սողոմոնը: «Այսպէս եւ ընտրեաց, թէպէտ զԻսահակ, սակայն ետես, թէ ոչ կարէ շինել զտունն եւ կառավարել, այլ Յակոբայ վիճակեաց ասելով. Նա կարէ շինել»: Այդպէս էլ բարկացկոտ Եղիայի փոխարեն, Եղիսեն պիտի առաջնորդեր ընտրեալ ժողովրդին. «նոյնպէս եւ զբարկացողն Իսահակ ամփոփեաց յապահով վանքն Մուսուրակու եւ Յակոբայ հեզոյն տալով կրկին Հոգին, յաջորդեցոյց զտեղի նորա»:

Որպէս վերջաբան մեջբերենք Մաղաքիա Օրմանյանի արհեստագործութիւնը ու գայրույթով լի եզրակացութիւնը Իսահակ Ահագինի մասին. «Իրաւ ալ պատմութեան մէջ անօրինակ է, որ բարձր պաշտօնի ընտրուած անձ մը, թէպէտ դժկամութեամբ, բայց վերջապէս պաշտօնապէս իրեն տրուած աստիճանն ու պաշտօնը յանձն առնելէն ետքը տարիներով վրան պահէ այդ անունը, առանց անոր պայմանները լրացնելու, եւ առանց իսկ զայն պաշտօնապէս եւ վճռապէս վրայէն նետելու. այլ անունը պահէ, գործն ալ կէսակատար կերպով կատարէ, եւ մանաւանդ անոր պատկանեալ հասոյթներն ալ գանձէ, առանց պաշտօնավայրը երթալու, եւ առանց պաշտօնին տէրը դառնալու»¹⁴:

Նկատենք, սակայն, որ Սահակի վարքագիծը իր ազդեցութիւնն է ունեցել հետագա սերունդների վրա: Դրա վառ արտահայտութիւնն է «Աղուանից» աթոռի որոշ կաթողիկոսների նմանատիպ վարքը¹⁵:

¹⁴ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 3455:

¹⁵ Յովհաննէս Եպիսկոպոս Ծախաբունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Մայր Աթոռ Էջմիածին, 2014, էջ 443-445:

ԲՆԱԳԻՐ

Բնագիրը հրատարակվում է ՄՄ 2212 ձեռագրից, որ Սիմեոն Երևանցու ինքնագիր «Քարոզգիրք»-ն է:

//(էջ 316ա) ՃԵ.(105) ՆՈՐԻՆ ՍԻՄԷՅՈՆԻ ՔԱՐՈԶ Ի ՊՕԼԻՍ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԱՆԿՄԱՆՆ ԻՍԱՀԱԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ, ԵՒ ՅԱԶՈՐԴԵՑՄԱՆՆ ՅԱԿՈԲԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՇԱՄԱԽԵՑԻՈՅ Ի 1208 (1759) ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ

Ասէ սուրբն Պօղոս, թէ. «Յոչ յուստեմէ է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, եւ որք էնն յԱստուծոյ կարգին եւ կացուցանիւն» (Հոռմ. ԺԳ 1): Քանզի, ըստ սոյնոյ առաւելոյս. «Անեւեւոյթն Աստուծոյ երեւելի արարածովս իմացեալ տեսանիւն» (Հոռմ. Ա 20), այսինքն՝ ի գեղեցկաց՝ գեղեցկութիւն, ի բարեաց՝ բարութիւնն, ի դատաստանաց՝ դատաստանն, եւ այլն: Նոյնպէս եւ. «Ի յիշխանաց եւ յիշխանութեանց՝ իշխանութիւնն» (հմմտ. Եփես. Բ 2), որպէս Սոդոմոն ասէ. «Ի գեղեցկութենէ արարածոց ընդ նմին համեմատութեան եւ արարչագործն նոցա նանաչի» (հմմտ. Իմաստ. ԺԳ 5): Եւ ըստ Պրոկղի. «Նախկին բարին, զոր ինչ յառաջ ածէ ի յարարածս, նախ ի յինքն երեւեցուցանէ», ըստ այնմ. Եւ զիշխանութիւնն բնականապէս եւ յինքենէ ունելով յառաջ ածէ եւ ի ժամանակս ժամանակս յարուցանէ եւ կարգէ իւրաքանչիւր գաւառաց եւ ազգաց զիշխանս եւ զվերակացոս ըստ հոգոյ եւ ըստ մարմնոյ: Զի գիտասցում, թէ եւ սոցա յարուցանողն Աստուած է իշխան ամենայնի, յորմէ տրի եւ այս իշխանութիւն, որում հնազանդելով մեր, իբր թէ Աստուծոյ իցեմք հնազանդք, ըստ այնմ, թէ. «Կացուցես զնոսա իշխանս ընդ յամենայն երկիր, որովք յիշեսցի անուն քո ընդ յամենայն յազգս» (Սաղմ. ԽԳ 17-18): Եւ տեսանելով մեր գոսսա, միշտ ի մտի ունիցիմք զտուօղն իշխանութեան, եւ խորշիցիմք ի յանկարգութենէ երկնչելով ի սոցանէ: Վասն այսորիկ թագատրք եւ իշխանք պատկեր Աստուծոյ կոչին, զի երեւելիք գոլով, զանեւեւոյթսն Աստուծոյ իբր ի հայելոյց ցուցանեն (հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 12):

Արդ, եթէ Աստուած է տուիչ իշխանութեան, եւ նովաւ կացուցանին իշխանք ամենայն, ըստ այնմ, թէ. «Ինեւ մեծամեծք մեծաման եւ բոռնք ինեւ ունին զերկիր» (Առակ Ը 16): Ուրեմն, հնազանդութիւն միայն պատշաճի մեզ եւ կամացն Աստուծոյ հետեւիլ, եւ ոչ հարցանել զպատճառն, զո՞րպէսն եւ զո՞վն, քանզի, դու ո՞վ ես, որ պատասխանի տաս Աստուծոյ եւ այլն: Զի ըստ

Սողոմոնի. «Ի ձեռին նորա է իմաստութիւն եւ կարողութիւն եւ նա յարուցանէ զշահաւէտ կառավարիչ, ըստ ժամանակին» (Սիրաբ ժ 4): Զն՝վն եւ զո՛րպէսն, եւ զվասնէ՛րն ինքն միայն գիտէ, որ կարօղն է մեծացուցանել եւ խոնարհեցուցանել: Ապա ուրեմն, մեզ «հնազանդութիւն պատշաճի կացուցանողին եւ կացուցելոյն» (հմմտ. Հոռմ. ժԳ 1), ըստ սրբոյն Պօղոսի եւ ոչ այլ ինչ:

Արդ, տե՛ս ուրեմն. «զխորս մեծութեան եւ իմաստութեան Աստուծոյ» (հմմտ. Հոռմ. ժԱ 33), ըստ Պօղոսի եւ զարմանալով միայն զփառս մատո՛նմա եւ ոչ այլ ինչ, ասելով, թէ. «Զի դու Տէր, որպէս կամեցար եւ արարեր» (հմմտ. Յոբ ԻԳ 13), «եղիցի կամֆ քո (Մատթ. Զ 10) օրհնեալ»: Քանզի ընտրեաց յամենայն ազգաց զԱբրահամ ինքեան ծառայ եւ սիրեաց զնա յոյժ, եւ խոստացաւ նմա լինիլ «հայր բազմութեան» (Ծն. ժէ 4), եւ քանզի անգամ //(էջ 316բ) ասաց նմա. «Բազմացուցանելով բազմացուցից զգաւակ քո եւ որպէս զաստեղս երկնից եւ որպէս զաւազ ծովու առանց թուոյ» (Ծն. ԻԲ 17), բայց Աբրահամու ոչ եցոյց զբազմութիւն որդոց, այլ զմի միայն զԻսահակ ամլածինն: Նոյնպէս եւ յետ նորա ցիսահակ ասաց զնոյնն եւ խոստացաւ (հմմտ. Ծն. ԻԸ 3), սակայն եւ ոչ նա ետես զբազմութիւն որդոց, այլ միայն զերկուս, յորոց եւ անդրանկան զրկեցաւ յօրհնութենէն անդրանկականէ (Ծն. ԻԵ 33) եւ յորդիութենէն (Ծն. Իէ 30-42) անկաւ, քանզի կամֆն Աստուծոյ այն էր, զի Յակոբ՝ կրտսեր որդին Իսահակայ ժառանգեսցէ զօրհնութիւնն եւ լինիցի հայր բազմութեան: Թէպէտ Եսաւ անդրանիկ գոյով յուսայր ժառանգել, եւ հայրն՝ Իսահակ ե՛ւս Եսաւայ կամէր աւանդել (Ծն. Իէ 4), սակայն ոչ կամեցաւ Աստուած, զի ի մտի եղեալ էր «զՅակոբ սիրել եւ զԵսաւ ատել» (Հոռմ. Թ 13): Վասն որոյ ըստ տնօրինմանն Աստուծոյ, իբրեւ էհաս վախճան Իսահակայ, ասէ Գիրն, թէ. «Ասէ մայրն Յակոբայ ցՅակոբ, առ քեզ խորտիկս եւ տուր առ հայրն քո եւ առ զօրհնութիւնն անդրանկական» (հմմտ. Ծն. Իէ 10), որ եւ արարն եւ էառ զօրհնութիւնն (հմմտ. Ծն. Իէ. 20-30), եւ եղեւ հայր բազմութեան եւ ետես զբազմութիւն որդոցն, եւ այլն: Արդ, կարես հարցանել զպատճառն, թէ. «Վասն է՛ր ո՛չ Աբրահամ, ո՛չ Իսահակ, ո՛չ Եսաւ, այլ՝ Յակոբ», զի Նա միայն գիտէ, «որ քննէ զսիրտս եւ զերկկամունս» (Սաղմ. է 10). որոյ կամֆն եղիցի օրհ[նեալ] (հմմտ. Մատթ. Զ 10):

Դարձեալ, ընտրեաց Աստուած զՄօսէս յամենայն Իսրայէլի, եւ կացոյց զնա իշխան, փրկիչ եւ վերակացու Իսրայէլի, զի ազատեալ զնոսա յեգիպտոսէ, տանիցէ յերկիրն Աւետեաց, զորս եւ ազատեաց եւ Խ.(40) ամ յանապատին կերակրեաց (հմմտ. Ելից ժԶ 32-35), զհոգս նոցա տարաւ յայնքան ժամա-

նակ: Եւ, յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ, ասաց Աստուած զՄօսէս, թէ. «Ել դու ի գլուխ լեռինդ եւ անտի նկատեա՛ գերկիրն Երուսաղէմի, եւ անդ ննջեա՛, զի դու ոչ մտցես յերկիրն զոր խօստացայ (հմմտ. Բ Օրէնք ԼԳ 1-4), այլ Եսու մտցէ եւ նա հովուեսցէ զժողովուրդ իմ» (հմմտ. Բ Օրէնք ԼԳ 9): Զկատարեալ պատճառն ինքն գիտէ, միայն այսֆան ասէ թէ. «Զի Եսու բարոյք խօսեցաւ գերկրէն (հմմտ. Թիմ ԺԳ 7) եւ դու տրտնջեցար» (հմմտ. Թիմ ԺԳ 29-33), եւ այլն:

Դարձեալ, ընտրեաց Աստուած զԴաւիթ թագաւոր ի վերայ Իսրայէլի, եւ այնֆան սիրեաց եւ հոշակելիս արար զնա ասելով. «Գտի զԴաւիթ այր ըստ սրտի իմոս» (հմմտ. Ա Թագ. ԺԳ 14), եւ այլն: Սակայն Դաւիթ այնֆան ցանկացաւ, եւ խնդրեաց յԱստուծոյ շինել զտուն Տեառն, Աստուած ասաց նմա, թէ. «Ո՛չ շինեսցես դու զտուն իմ (Բ Թագ. է 5), այլ որդին քո Սողոմոն շինեսցէ» (Գ Թագ. Ը 19), որ եւ շինեաց իսկ (Գ Թագ. Ը 12-13): Զկատարեալ վասնէ՛րն ինքն միայն գիտէ: Միայն այսֆան, թէ. «Դու զարիւն շատ հեղեր» (Բ Թագ. է 8-12):

Այսպէս եւ ընտրեաց զԵղիա մարգարէ Իսրայէլի, եւ այնֆան հրաշալիս արար զնա, եւ այլն: Յետոյ ասաց ցնա. «Դու ել յեկինս, այլ ոչ ես կարես զԻսրայէլ հովուել, այլ Եղիսէ հովուեսցէ զկրկին հոգի քո առնով (հմմտ. Դ Թագ. Բ 13-14): Զվասն է՛րն կատարեալ, ինքն միայն գիտէ:

//(էջ 317ա) Արդ, որովհետեւ Աստուած է ընտրողն եւ կացուցանողն եւ տնօրինողն ամենայնի, որպէս ցուցաւ, մեզ հնազանդութիւն միայն պատշաճնի (հմմտ. Հոռմ. ԺԳ 1), եւ ոչ եթէ քննել զվասնէ՛րն եւ զո՛րպէսն: «Մի՛ թէ ասիցէ կան զբրոսն, թէ. Ընդէ՛ր այդպէս արարեր» (հմմտ. Հոռմ. Թ 20), այլ միայն թէ. «Կամք ոք եղիցի օրհնեալ, որպէս կամեցար» (հմմտ. Մատթ. Զ 10): Այսպէս իմա՛ եւ զնարդենիս եղեալն, եւ մի տարակուսիր, քանզի որպէս Աբրահամ եւ Իսահակ, նախապէս թէպէտ ընտրեցան եւ սիրեցան յԱստուծոյ, եւ առին յԱստուծոյ զխոստումն ի տեսանել զբազմութիւն որդոց եւ լինիլ հայր բազմաց, սակայն զայն խոստումն Աստուած առ Յակոբ՝ կրտսեր որդին Իսահակայ կատարեաց, քանզի ի ստիպմանէ մօրն էառ զօրհնութիւն անդրանկական (հմմտ. Ծն. Իէ 10), եւ տուչութեամբն Աստուծոյ եղեւ հայր բազմութեան:

Ըստ այսմ օրինակի եւ նոյն Աստուածն, թէպէտ նախապէս զԻսահակ վարդապետն ընտրեաց եւ խոստացաւ նմա լինիլ հայր եւ հայրապետ ազգիս Հայոց, եւ լինիլ մեծ եւ առաջին յեղբարս իւր, սակայն զխոստումն զայս առ

նովա ոչ կատարեաց, քանզի եւ Մայրն մեր՝ Սուրբ Էջմիածին ստիպեաց զկրտսերն՝ զՅակոբ որդին առնուլ զօրհնութիւնն անդրանկական յԱստուծոյ, եւ նոյն Աստուածն ըստ սրտի Մօրս մերոյ զնա արար հայր բազմութեան եւ հայրապետ ազգիս մերոյ, եւ անդրանիկ յեղբայրս իւր, որպէս եւ եղենն, եւ այլն:

Դարձեալ, որպէս ընտրեաց նախապէս զՄօսէս ի վերակացութիւն ժողովրդեանն ի մտանել յերկիրն Աւետեաց եւ հովուել եւ հանգուցանել զԲարայել: Յետ այնքան ամաց Մօսիսի ասաց՝ ննջել ի լեառն, յորմէ միայն հայեցաւ յերկիր (հմմտ. Բ Օրէնք ԼԳ 1-4): Եւ ետուայ ետ զայն գործ, ասելով, թէ. «Դու տրտնջացեր» (հմմտ. Թիմ ԺԳ 29-33): Նոյնպէս եւ նոյն Աստուածն, թէպէտ՝ նախապէս ընտրեաց զԻսահակն, ի հովուել զազգս Հայոց, մտանելով յերկիրն Էջմիածնի, սակայն յետոյ նոյն Աստուածն ասաց նմա, թէ. «Տրտնջացեր դու» (հմմտ. Թիմ ԺԳ 29-33): Վասն որոյ ի լեռնէդ Կարնոյ միայն նկատեա՛ յերկիրն յայն եւ հանգիր յայդր: Դու ոչ հանգուցանես զժողովուրդ իմ, այլ Յակոբ, որ բարօք խօսի զերկրէն եւ տֆնի յայսֆան ժամանակ վասն նորա: Որպէս եւ եղենն իսկ: Զարմացիր եւ տարակուսիր որքա՛ն կամիս:

Դարձեալ, որպէս ընտրեաց նախապէս, թէպէտ զԴաւիթ ի թագաւոր, սակայն ասաց նմա. «Դու ոչ կարես շինել զտուն իմ (Բ Թագ. է 5), այլ Սողոմոն» (Գ Թագ. Ը 19), այսպէս եւ ընտրեաց, թէպէտ զԻսահակ, սակայն ետես, թէ ոչ կարէ շինել զտունն եւ կառավարել, այլ Յակոբայ վիճակեաց ասելով. «Նա կարէ շինել»: Վերջապէս, որպէս զԵղիսս վասն բարկացողութեանն յերկինս վերացոյց եւ զհեզն՝ զԵղիսս (=Եղիսէ) կացոյց ի տեղի նորա, նոյնպէս եւ զբարկացողն Իսահակ ամփոփեաց յապահով վանքն Մուտուրակու եւ Յակոբայ հեզոյն տալով կրկին Հոգին յաջորդեցոյց զտեղի նորա: Եթէ կարես ընդդէմանալ կամաց տնօրինողին, յառաջ մատիր, թէ ո՛չ, լուռ լե՛ր, եւ տուր փառս Աստուծոյ:

FR. SHAHE HAYRAPETYAN

A SERMON BY CATHOLICOS SIMĒON EREVANTS'I

Key words: Catholicos, sermon, Holy Etchmiadzin, Sahak Ahagin, Yakob Shamakhets'i, Maghakia Ormanian, Monastery of the Illuminator, Abraham.

In his unpublished two-volume *Sermonary*, the eminent 18th-century scholar and public figure Catholicos SimĒon Erevants'i (1763-1780) not only addresses religious and ecclesiastical matters but also references historical figures and events. In the second volume, containing his “External” or non-liturgical sermons, SimĒon examines the factors that contributed to the downfall of Catholicos Sahak Ahagin. After the death of the previous Catholicos Alexander Buzandats'i II (1753-1755), Sahak Keghets'i, also known as “Ahagin,” (“the Tremendous”) was elected Catholicos. SimĒon Erevants'i voices his astonishment at the circumstances surrounding Sahak's short tenure, questioning how someone could be elected as Catholicos without ever visiting Holy Etchmiadzin and retreat to a monastery, enjoying all the privileges of the Catholicos without engaging in any church-related matters. In 1759 Sahak's removal from the Catholicosal throne was orchestrated, and bishop Yakob Shamakhets'i was elected as his successor. In structuring the sermon—published here on the basis of Ms M2212, which is SimĒon's autograph—the Catholicos explains Sahak's downfall and Yakob's selection in terms of divine providence, referencing various episodes from the Bible, specifically the Old Testament.

СВЯЩЕННИК ШАГЭ АЙРАПЕТЯН

ПРОПОВЕДЬ КАТОЛИКОСА СИМЕОНА ЕРЕВАНЦИ

Ключевые слова: Католикос, книга проповедей, Св. Эчмиадзин, Саак Ахагин, Акоб Шамахеци, Малахия Орманян, монастырь Просветителя, Абраам, Матенадаран, Иерусалим.

Видный мыслитель и общественный деятель, католикос Симеон Ереванци (1763-1780) в своей еще не изданной двухтомной «Книге проповедей», помимо церковных и религиозных тем, касается также исторических личностей и событий. Во втором томе небогослужебных проповедей он обратился к при-

чинам, приведшим к падению католикоса Саака Кехеци (прозванного Ахагин – Великий). После смерти католикоса Александра II Бюзандаци (1753-1755) католикосом был избран Саак Кехеци. Автор выражает в проповеди недоумение по поводу того, что избранный католикос, даже не явившись в Св. Эчмиадзин, удалился в другую обитель и, пользуясь всеми правами Патриарха, не участвовал в руководстве церковью. В 1759 году Саак Кехеци был смещен с патриаршего престола, и на него возвели епископа Акоба Шамахеци. В издаваемой на основе автографа (рук. М2212) проповеди Симеон Ереванци пытается, обращаясь к примерам из Священного Писания, найти объяснение устранению с патриаршего престола Саака, а избрание Акоба преподносит как акт божественного промысла.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գագիկ Դանիելյան

Կիրիկյան Հայաստանն Իզգ ալ-Դին իբն Շադգադի երկերում
(աղբյուրագիտական ներածություն)..... 5

Վահե Թորոսյան

Ֆրանսիական հետքեր Կիրիկիայի հայոց արքաների թագադրման ձեսում..... 32

Աշոտ Սարգսյան

Հայոց դարձի երկրորդ փուլը. Հիմնական քաղաքական
օրակարգը սպասարկող ծրագիրը 48

Օլգա Վարդապարյան

Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան»
աշխատությունը և Մխիթար Գոշի առակները (ոուսերեն)..... 74

Հասմիկ Իրիցյան

Դավիթ եպս. Գեղամեցին գրի՞չ, թե՞ նոր սքանչելագործ
միևնույն ձեռագրում (ՄՄ 3812, Հայսմավուրք)..... 94

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Կարեն Մաթևոսյան

Դլաձորի համալսարանը և Վերին Նորավանքի դպրոցը 110

Թամարա Մինասյան

Գրիչ և մանրանկարիչ Մխիթար Անեցու կյանքն ու
ձեռագրական ժառանգությունը 133

Լուսինե Թումանյան

Արտամետ քաղաքի գրչության կենտրոնը 146

Գոհար Չատյան

Դրիմի նշանավոր գրիչ Նատերի՝ ընտանեկան կարևոր
մի գրվագի ճշգրտման փորձ 158

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարինե Մոսիկյան

Թանկարժեք քարերը և դրանց բուժական
հատկությունները ըստ միջնադարյան աղբյուրների..... 170

Գայանե Սահրադյան

18-րդ դարի հայերեն ակրապատիւնը (ՄՄ 372)
և արևելյան բժշկական ձեռագրային ավանդույթը 198

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Հակոբ Քյոսեյան**

Տիրատուր Կիլիկեցու Քարոզ եկեղեցույ, որ ասէ «Տէր, սիրեցի
զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց» ճառը..... 208

Միհրան Ա. Մինասեան

Երկու անտիպ փաստաթուղթ՝ Խաչկավանքի եւ
Կարնոյ գիւղերու ու անոնց եկեղեցիներու մասին 227

Ռուզան Պողոսյան

«Բանք իմաստասիրաց աւգտակարք եւ պիտանացուք» 250

Գոհար Մուրադյան

«Բանք իմաստասիրաց» ժողովածուի հունարեն աղբյուրը 278

Առեկ Աբարյան

Առաքել Սյունեցու՝ Տյառնընդառաջի, Ծաղկազարդի,
Հարության և Վարդանանց սրբերին նվիրված անտիպ տաղերը 313

Տ. Շահե Քահանա Հայրապետյան

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի մի քարոզ 323

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**Ազատ Բոզոյան, Զարուհի Հակոբյան**

Գևորգ Դազարյան, Ուղղափառ հայք, Երևան, 2024, 241 էջ 336

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների
ձևավորմանը վերաբերող պահանջներ 344

CONTENTS

HISTORY AND PHILOLOGY

Gagik Danielyan

Cilician Armenia in the Works of ʿIzz al-Dīn ibn Shaddād
(a Critical Introduction)5

Vahe Torosyan

French Traces in the Coronation Ordo of the Armenian Kingdom of Cilicia..... 32

Ashot Sargsyan

The Second Phase of the Christianisation of Armenia:
A Program Serving a Fundamental Political Agenda48

Olga Vardazaryan

Basil of Caesarea's Hexaameron and the Parables of Mkhit'ar Gosh..... 74

Hasmik Iritsyan

Bishop David Geghamets'i as a Scribe or a New Wonder-worker
in the Same Manuscript? (Ms M3812, Synaxarium).....94

MANUSCRIPT CULTURE

Karen Matevosyan

Gladzor University and the School of Verin (Upper) Noravank' Monastery..... 110

Tamara Minasyan

The Life and Manuscript Legacy of the Scribe and Miniaturist Mkhit'ar Anets'i.....133

Lusine Tumanyan

The Scriptorium of Artamet.....146

Gohar Chatyan

An Attempt to Clarify an Important Family Episode of the
Famous Crimean Scribe Nater.....158

NATURAL SCIENCES

Karine Mosikyan

Gemstones and Their Medicinal Properties According to Medieval Sources.....170

Gayane Sahradyan

A 18th Century Armenian Pharmacopoeia Akhrabadin (M 372)
and The Eastern Medical Manuscript Tradition.....198

PUBLICATIONS

Hakob Kyoseyan

Tiratur Kilikets'i's *Sermon to the Church* "LORD, I have loved the habitation of your house, and the place where your honour dwelleth" 208

Mihran A. Minasian

Two Previously Unpublished Documents on the Khachgavank Monastery, Villages of Garin (Erzeroum) and Their Churches 227

Ruzan Poghosyan

"Useful and Beneficial Sayings of Philosophers" 250

Gohar Muradyan

The Greek Source of the Sayings of the Philosophers 278

Arevik Arabyan

Unpublished Odes (Taghs) of Aṙak'el Siwnets'i Dedicated to the Feasts of Candlemas, Palm Sunday, Easter, and the Saint Vardanids 313

Fr. Shahe Hayrapetyan

A Sermon by Catholicos Simēon Erevants'i 323

BOOK REVIEW

Azat Bozoyan, Zaruhi Hakobyan

Gevorg Kazaryan, *Orthodox Armenians*, Yerevan, 2024, 241 p. 336

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

Гагик Даниелян

Киликийская Армения в сочинениях Изз Ад-Дина ибн Шаддада
(историографическое введение)..... 5

Ваэ Торосян

Французский след в коронационном ритуале Армянского
Киликийского царства..... 32

Ашот Саргсян

Второй этап обращения армян в христианство: программа, обслуживающая
основную политическую повестку..... 48

Ольга Вардазарян

«Шестоднев» Василия Кесарийского и притчи Мхитара Гоша..... 74

Асмик Ирицян

Епископ Давид Гегамеци как писец или новый чудотворец в одной и той же
рукописи? (№ 3812 из собрания Матенадарана, Синаксарий / Айсмавурк)..... 94

РУКОПИСНАЯ КУЛЬТУРА

Карен Матевосян

Университет Гладзор и школа монастыря Верин (Верхний) Нораванк..... 110

Тамара Минасян

Жизнь и рукописное наследие писца и миниатюриста Мхитара Анеци..... 133

Лусине Туманян

Скрипторий города Артамет..... 146

Гоар Чатян

Попытка уточнения важного семейного эпизода известного
крымского писца Натера..... 158

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Карине Мосикян

Драгоценные камни и их целебные свойства по
средневековым источникам..... 170

Гаяне Сахрадян

Армянская фармакопея *ахрабадин* XVIII века (рукопись М372)
в традиции восточных медицинских рукописей.....198

ПУБЛИКАЦИИ**Акоп Кеосеян**

«Церковная проповедь Тиратура Киликеци, гласящая Господи!
Возлюбил я обитель дома Твоего и место жилища славы Твоей».....208

Мигран Минасян

Два ранее не публиковавшихся документа о Хачкаванке и
деревнях Карина (Эрзерум).....227

Рузан Погосян

«Полезные и поучительные изречения философов».....250

Гоар Мурадян

Греческий источник древнеармянских «Изречений философов».....278

Аревик Арабян

Неизданные стихи Аракела Сюнеци о Сретении Господнем, Вербном
воскресении, воскресении Христа и посвященные Святым Варданидам.....313

Священник Шагэ Айрапетян

Проповедь католикоса Симеона Ереванци.....323

РЕЦЕНЗИЯ**Азат Бозоян, Заруи Акобян**

Геворг Казарян, *Православные армяне*, Ереван, 2024, 241 с.....336

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 38

BULLETIN OF MATENADARAN

Volume 38

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 38

Ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Ծնունդ, ծաղկող՝ Մխիթար Անեցի, Ավետարան, 14-րդ.դ, ՄՄ 7740:
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Տեխնիկական խմբագիր՝ Մարիամ Բրուտյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Ձափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 22, տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի

ինստիտուտի հրատարակչություն, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/